

Newsletter

Delegation of the European Union to Armenia

July-September 2011 #4(9)

Focus On/խոչոր պլան

Support for the Human Rights Defender's Office

The Human Rights Defender of Armenia, Karen Andriasyan comments on some of the points of EU-Armenia cooperation in the sphere of human rights.

What are the main areas of cooperation between the Defender's office and the EU?

- Within EU-Armenia cooperation I attach particular importance to the fact that European institutions are not only critical, but also patiently offer systematic solutions. Financial, professional and technical assistance to the Office promotes improvement in the area of human rights in Armenia.

Support by the EU Advisory Group

- The EU Advisory Group significantly helps the Defender's Office to perform its duties. We have a professional expert helping us strengthen the institution in accordance with the Paris Principles, organise internal management and other processes. With the active intervention of experts of the EU Advisory Group, the Strategy of the Armenian Human Rights Defender's Office for 2011-2017 has been developed. The EU also places emphasis on cooperation with public sector. In this regard, we have achieved good cooperation: a large conference has been organised with financial support of the EU, dedicated to the cooperation between the Ombudsman and non-governmental organisations dealing with human rights protection issues in a number

of areas (protection of rights of national minorities, refugees, children, the disabled, women, servicemen, prisoners and the environment).

The Ombudsman's Office as a national preventive mechanism against torture and violence

- With support of the EU a Torture Prevention Expert Council has been established, which has assisted the Defender's Office for three years, conducting research and monitoring all closed institutions of Armenia where people might suffer from torture and/or violence. As a result, we have taken a positive and significant step forward: appropriate professional potential has been recognised by the Defender's Office and is evolving, represented by staff and NGO volunteers who will replace the Expert Council founded by the EU.

Expected collaboration

- From January 2012 a new EU supported project has been planned, the aim of which is to give assistance to all beneficiaries of the electoral process, in case the rights of any person were violated during the election campaign, on election day or later. A hotline will be in operation and mobile ambulance will be deployed anywhere there might be a problem. Within the scope of the same project, several offices in the regions are expected to open to expand the presence of the Ombudsman geographically and make human rights protection more widely available.

Աջակցություն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ԵՄ-Հայաստան համագործակցության որոշ ուղղությունների մասին մեկնաբանություններ է տալիս ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը:

Ո՞րն է պաշտպանի գրասենյակի Եվրամիության հետ համագործակցության առանձնահատկությունը:

- ԵՄ-Հայաստան համագործակցության մեջ առանձնակի կարևորում են այն փաստը, որ Եվրոպական կառույցները ոչ միայն քննադատում, այլև համբերատարորեն համակարգային լուծումներ են առաջարկում: Իսկ ֆինանսական, փորձագիտական և տեխնիկական աջակցությունը գործնականորեն

խթանում է Հայաստանում մարդու իրավունքների ոլորտի բարելավման աշխատանքները:

Աջակցություն ԵՄ խորհրդավարական խմբի կողմից

- Պաշտպանի գրասենյակին իր գործառնություններն իրականացնելիս մեծապես օգնում է նաև ԵՄ խորհրդավարական խումբը: Մեր գրասենյակում աշխատում է պրոֆեսիոնալ փորձագետ, որն օգնում է ամրապնդել մեր կառույցը՝ փարիզյան սկզբունքներին համաձայն, և կազմակերպել ներքին կառավարումն ու այլ գործընթացները: Խորհրդավարական խմբի փորձագետների ակտիվ միջամտությամբ մշակվել է 2011-2017 թթ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ռազմավարությունը: ԵՄ-ն մեծ նշանակություն է տալիս նաև հասարակական հատվածի հետ համագործակցությանը: Այս առումով և բավականին նպաստավոր համագործակցություն է ստացվել ԵՄ ֆինանսական աջակցությամբ կազմակերպվել է մեծ համաժողով՝ նվիրված մի շարք ոլորտներում (ազգային փոքրամասնությունների, փախստականների, երեխաների, հաշմանդանների, կանանց, զինծառայողների, կալանավորների իրավունքների պաշտպանության, քնապահպանության) մարդու իրավունքների պաշտպանի և մարդու իրավունքների զբաղվող հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության հարցերին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը որպես խոչորությունների և բռնությունների ազգային կանխարգելիչ մեխանիզմ

- ԵՄ աջակցությամբ ստեղծվել է խոչորությունների կանխարգելման փորձագիտական խորհուրդ, որը երբեք տարի շարունակ օգնել է Պաշտպանի գրասենյակին ուսումնասիրություններ և մոնիտորինգ անցկացնելով Հայաստանի բոլոր այն փակ հաստատություններում, որտեղ մարդիկ կարող են ենթարկվել խոչորանումների և բռնության: Արդյունքում դրական մեծ քայլ է արձանագրվել. Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտում ձևավորվել է համապատասխան մասնագիտական ներուժ՝ ի դեմս գրասենյակի անձնակազմի և հասարակական կազմակերպությունների կամավորների, որոնք և փոխարինելու է ԵՄ ֆինանսավորմամբ աշխատող փորձագիտական խորհրդին:

Ակնկալվող համագործակցություն

- 2012 թ. հունվարից ԵՄ աջակցությամբ նոր ծրագիր է մեկնարկելու, որի նպատակն է լինելու իրավական աջակցություն ցուցաբերել ընտրական գործընթացի բոլոր շահառուներին այն դեպքում, երբ քարոզարշավի ընթացքում, ընտրությունների օրը կամ դրանից հետո կխախտվի որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի իրավունքը: Գործելու է թե՛ զիժ, լինելու են իրավական «շտապօգնության» մեքենաներ, որոնք կհայտնվեն բոլոր այն վայրերում, որտեղ խնդիրներ կօժգեն:

Ակնկալվում է, որ նույն ծրագրի շրջանակներում կբացվեն մի քանի մարզային գրասենյակներ՝ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայությունն աշխարհագրորեն ավելի մոտ և հասանելի դարձնելու համար:



Official visit/Պաշտոնական այց

Philippe Lefort: "The South Caucasus is an important region for the EU"

On 7 September the EUSR for the South Caucasus and the Crisis in Georgia, Philippe Lefort, visited Armenia. Lefort started his duties on 1 September and came to Yerevan as part of his first visit to the region. During a press conference with Minister of Foreign Affairs Edward Nalbandian, Lefort mentioned that the South Caucasus had great potential for further development thanks to its economic and cultural strength. He also reconfirmed EU support for the establishment of peace and stability in the region. The Nagorno-Karabakh conflict remained one of the main topics for future discussion. Lefort highlighted the need for a peaceful negotiation process between Armenia and Azerbaijan, emphasising the importance of the OSCE Minsk Group. Nalbandian stressed Armenia also wished to reach a peaceful settlement.



Ֆիլիպ Լեֆոր. «Հարավային Կովկասը կարևոր տարածաշրջան է ԵՄ-ի համար»

Սեպտեմբերի 7-ին Հայաստան էր ժամանել Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով Եվրամիության հասույժ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորը: Լեֆորն իր պաշտոնը ստանձնել է սեպտեմբերի 1-ից և Երևան է ժամանել իր առաջին տարածաշրջանային այցի շրջանակներում:

Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ համատեղ մամուլ ասուլիսի ընթացքում Լեֆորը նշել է, որ Հարավային Կովկասը տնտեսական և մշակութային մեծ ներուժ ունի հետագա զարգացման համար: Նա նաև վերընդհանրացրեց ԵՄ-ի աջակցությունը տարածաշրջանում՝ խաղաղությունն և կայունությունն հաստատելու գործում: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը շարունակում է մնալ հետագա քննարկումների հիմնական թեմաներից մեկը: Ֆիլիպ Լեֆորը շեշտել է Հայաստանի և Ադրբեյջանի միջև խաղաղ բանակցային գործընթացի անհրաժեշտությունը՝ ընդգծելով ԵԱՀԿ Մինսկի խմբի կարևորությունը: ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն իր հերթին վստահեցրել է, որ Հայաստանը ևս ցանկանում է հարցի լուծմանը հասնել բացառապես խաղաղ ճանապարհով:

Հաղորդագիր

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Հուլիս-սեպտեմբեր 2011 #4(9)

EU Advisory Group supports reforms

On 28 June 2011 the 6th EU Advisory Group Board meeting took place in Yerevan. The EU Advisory Group, represented by Team Leader Antti Hartikainen, presented its Quarterly Report and Work Plan for the period of June 2011-May 2012.

The meeting was opened by Secretary of the Armenian National Security Council Artur Baghdasaryan. He stressed the importance of the Advisory Group's contribution to reform processes in Armenia in the fields of the economy, law, human rights and institutional issues.

The Board took note of the Needs Assessment Report, analysing gaps between the current and desired situation.

Initiatives taken towards establishing a mobility partnership, as well as future negotiations over EU-Armenia visa facilitation and a readmission agreement, were welcomed.

Ambassador Raul de Luzenberger stressed that the EU and Armenia had entered a new stage in their relations through the Association Agreement. "The Advisory Group will continue providing tailor-made policy advice to support the development of this increasingly close relationship. The EU is ready to support Armenia in pushing forward reforms linked to AA negotiations and to the fulfilment of its national priorities", said the Ambassador.



ԵՄ խորհրդատվական խումբը ուղղունում է բարեփոխումները

2011 թ. հունիսի 28-ին Երևանում տեղի է ունեցել ԵՄ խորհրդատվական խմբի (ԽՏԽ) խորհրդի 6-րդ նիստը: ԽՏԽ-ն՝ թիմի ղեկավար ԱՆՔի Հարթի-կայնենի գլխավորությամբ ներկայացրել է եռամսյակային հաշվետվությունը և 2011 թ. հունիսից մինչև 2012 թ. մայիս ամիսն ընկած ժամանակահատվածի համար նախա-

տեսված աշխատանքային ծրագիրը: Նիստը բացել է ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը: Նա կարևորել է ԽՏԽ-ի ունեցած ներդրումը Հայաստանում տնտեսության, օրենսդրության, մարդու իրավունքների և ենթակառուցվածքների զարգացման ոլորտներում իրականացվող բարեփոխումների գործընթացում:

Խորհուրդը ներկայացրել է «Կարիքների գնահատման հաշվետվությունը» տալով ընթացիկ փաստացի ու ցանկալի իրավիճակների միջև առկա հակասությունների վերլուծությունը: Խորհուրդը ուղղունում է այսպես կոչված «Շարժունակության շուրջ գործընկերության» ստեղծման, ինչպես նաև Հայաստան-ԵՄ վիզաների տրամադրման գործընթացի դյուրացման և ռեադմիսիայի համաձայնության շուրջ ապագա բանակցություններին ուղղված նախաձեռնությունները:

Դեսպան Ռաուլ դե Լուզենբերգերը նշել է, որ Ասոցացման համաձայնագրի միջոցով ԵՄ-ն և Հայաստանը բացել են հարաբերությունների նոր փուլ: «ԵՄ խորհրդատվական խումբը կշարունակի տրամադրել քաղաքականության հարցերով խորհրդատվություն, որը կնպաստի այս սերտ հարաբերությունների զարգացմանը: ԵՄ-ն պատրաստ է աջակցելու Հայաստանին Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցային գործընթացին առնչվող բարեփոխումների և ազգային առաջնահերթությունների իրականացման նպատակով», - ասել է դեսպանը:

Reducing child labour

Under the aegis of an EU-funded project, which aims to reduce and, in some instances, wholly eliminate the use of child labour, a discussion on problems in the Armenian private sector was held on 14 June in Yerevan. While participants agreed it was better for children to learn instead of work, they saw a key difficulty in establishing whether a child were employed or not.

The specifics of labour regulations for children under 16 years of age were presented by Tadevos Avetisyan, the Head of the Labour and Employment Department of the Ministry of Labour and Social Affairs of Armenia. He said that Armenia appeared to be dealing with this problem better than many other developing countries, mostly because the Armenian mentality refused to accept the exploitation of children. However, much work would have to be done before the end of the year, he added. One of the recent developments was a Code of Conduct for Employers, which was not a legal requirement, but desirable to follow.

The project is financed by the European Union and implemented by the Centre of Socio-Economic Research (CSERA). It will run until the end of 2011.



Երեխայի աշխատուժի օգտագործման նվազեցում

Նվազեցնել երեխայի աշխատուժի կիրառումը մասնավոր հատվածում, իսկ, որոշ դեպքերում՝ ամբողջությամբ վերացնել... Այս նպատակին էր ուղղված ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում հունիսի 14-ին Երևանում կայացած քննարկումը: Մասնակիցները համաձայնել են, որ երեխաների համար ավելի լավ է սովորելը, քան աշխատելը, սակայն նրանց համար ակնհայտ է եղել մի կարևոր հարց. ինչպես իմանալ՝ երեխան աշխատում է թե՞ ոչ:

Մինչև 16 տարեկան երեխաների աշխատուժի օգտագործման հետ կապված առանձնահատկությունների մասին է խոսել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության բաժնի ղեկավար Թադևոս Ավետիսյանը: Նա ասել է, որ այս ոլորտում Հայաստանն ավելի քիչ խնդիրներ ունի, քան շատ ուրիշ զարգացող երկրներ, և դա մեծապես պայմանավորված է հայերի մտածելակերպով. հայերն անընդունելի են համարում երեխաների շահագործումը: Այդուհանդերձ, մինչև տարեվերջ, այս ոլորտում դեռ շատ անելիքներ կան:

Վերջին ձեռքբերումներից է գործատուների համար «Բիզնես վարքագծի կանոնագրի» մշակումը, որին հետևելը ոչ պարտադիր, սակայն ցանկալի պայման է:

Նախագիծը ֆինանսավորում է ԵՄ-ը, իրականացնում է հայկական Հասարակական-տնտեսագիտական հետազոտությունների կենտրոնը: Այն տևելու է մինչև 2011 թ. վերջը:

Persistent organic threats

On 31 May 2011 an international conference marking the tenth anniversary of the Stockholm Convention on persistent organic pollutants (POPs) took place in Tsaghkadzor. The results of the EU funded project "Scaling up experience in improvement of chemical safety to contribute to poverty reduction in rural Armenia" were also presented.

International and national experts, together with government and civil society representatives, discussed threats to and solutions for environmental protection. While pointing out the main hotspots polluted by POPs, including the chemical waste site in Nubarashen, Yerevan, the conference participants attested that the pending issues could be solved through interaction between governmental bodies, experts and NGOs.

"This conference is not only devoted to environmental threats", said Jean Christophe Gayrand, the Head of Operations of the EU Delegation to Armenia, "but it is also a platform to establish a wide range of agricultural programmes which could be carried out together as international projects. Our colleagues from the Czech Republic, Ukraine and Belarus can assist jointly in work and research".

This project is part of the efforts to help Armenia implement the Stockholm Convention, a global treaty to protect human health and the environment from highly dangerous chemicals and bring about sustainable solutions through the close cooperation of NGOs, governmental bodies and experts in the field.

The conference was organised by the Arnika Association from the Czech Republic and the Armenian Women for Health and a Healthy Environment NGO, with financial support from the European Union and the OSCE Office in Yerevan.

Կայուն օրգանական սպառնալիքներ

2011 թ. մայիսի 31-ին Ծաղկաձորում անցկացվել է Կայուն օրգանական աղտոտիչների օգտագործման վերաբերյալ Ստոկհոլմի կոնվենցիայի 10-րդ տարեդարձին նվիրված միջազգային կոնֆերանս, որտեղ ներկայացվել են նաև ԵՄ ֆինանսավորմամբ իրականացված «Հայաստանի գյուղական համայնքներում աղբատույան կրճատմանը նպաստելու նպատակով բնակչության քիմիական անվտանգության բարելավման ոլորտում ձեռք բերված փորձի տարածում» ծրագրի արդյունքները:

Միջազգային և ազգային փորձագետները կառավարության և հասարակության ներկայացուցիչների հետ քննարկել են շրջակա միջավայրի սպառնալիքների և դրանց լուծման հարցերը: Մատնանշելով կայուն օրգանական սպառնալիքներով աղտոտված հիմնական թեժ կետերը, այդ թվում Երևան քաղաքի Նուբարաշեն համայնքում գտնվող քիմիական թափոնների կայանը, մասնակիցները համոզվում են հայտնել, որ հիմնախնդիրները հնարավոր է լուծել պետական մարմինների, փորձագետների և ՀԿ-ների փոխգործակցությամբ:

«Այս միջոցառումը նվիրված է ոչ միայն շրջակա միջավայրի հիմնախնդիրներին, այն նաև հնարավորություն է տալիս ձեռնարկելու լայն գյուղատնտեսական ծրագրեր և միջազգային նախագծեր: Այստեղ են մեր գործընկերները Չեխիայից, ՌԻկրահիայից, Բելառուսից, Մրանք, ովքեր կարող են աջակցել համատեղ հետազոտություններ անելու գործում», - ասել է Հայաստանում ԵՄ պատվիրակության գործառնությունների բաժնի ղեկավար Ժան-Քրիստոֆ Գայրանդը:

Այս նախագիծը օժանդակում է Հայաստանին իրականացնելու Ստոկհոլմի կոնվենցիան՝ հատուկ վտանգավոր քիմիական նյութերից մարդկանց առողջության և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված միջազգային համաձայնագիրը, և կայուն լուծումներ գտնելու՝ հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների և մասնագետների ջանքերը համատեղելու միջոցով:

Կոնֆերանսը կազմակերպել էին Չեխիայի «Առնիկա» ասոցիացիան և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությունները՝ ԵՄ-ի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

More EU support for SMEs

On 7 June 2011 the Turn Around Management and Business Advisory Service (TAM/BAS) programmes of the European Bank for Reconstruction and Development (EBRD) officially started in Yerevan. The EU has pledged an additional €5 million to support TAM/BAS programmes, which provide micro, small and medium enterprises (SMEs) with direct assistance from business advisors and consultants, adapting them to the demands of a market economy. These funds should allow the implementation of at least 30 TAM and 500 BAS programmes in the region. The funds are earmarked for use in the Eastern Partnership countries: Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova and Ukraine.

The TAM and BAS supported projects bring best business standards and improve SME management skills like planning, production, quality control and marketing, thereby making them more competitive and able to attract external financing.



ԵՄ լրացուցիչ օժանդակություն ՓՄՁ-ների

2011 թ. հունիսի 7-ին Երևանում պաշտոնապես մեկնարկել են Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) «Շրջադարձային կառավարման խումբ» և «Գործարար խորհրդատվական ծառայություն» (TAM և BAS) ծրագրերը:

ԵՄ-ն տրամադրել է հավելյալ 5 մլն եվրո՝ աջակցելու TAM և BAS ծրագրերին, որոնք շուկայական տնտեսության պահանջներին համապատասխանեցնելու հարցում փորձ և միջին ձեռնարկություններին տրամադրում են խորհրդատվական և փորձագիտական աջակցություն: Այս միջոցները թույլ կտան տարածաշրջանում իրականացնել առնվազն 30 TAM և 500 BAS ծրագրեր: Դրանական միջոցները նախատեսված է օգտագործել Արևելյան համագործակցության երկրներում՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ռուսիայում:

TAM և BAS ծրագրերի կողմից աջակցություն ստացած նախագծերը սահմանում են բիզնեսի վարման լավագույն ստանդարտները և բարելավում փորձ ու միջին ձեռնարկությունների կառավարման հմտությունները, ինչպիսիք են՝ պլանավորումը, արտադրությունը, որակի վերահսկումն ու շուկայագիտությունը. այդպիսով ձեռնարկությունները դարձնելով ավելի մրցունակ և գրավիչ՝ արտաքին ֆինանսավորման համար:

More: http://www.enpi-info.eu/main.php?id=25515&id_type=1&lang_id=450 <http://www.ebrd.com/pages/news/press/2011/110609.shtml>

Promoting European Media Standards

The EU and the Council of Europe (CoE) launched a joint project on "Promoting media freedom, professionalism and pluralism in the South Caucasus and Moldova" on 17 June. The project aims to support the development of legal and institutional guarantees for freedom of expression, high quality journalism and a pluralistic media landscape in line with European standards. It is co-funded by the EU and CoE with a total budget of €1.1 m.

Leila Dervishagich from the CoE said at a press-conference in Yerevan that the project had been launched in January 2011 and would last two years, during which more than 20 events would be organised. "The EU and the Council of Europe

are also ready to provide consulting and other support to Armenia in the future," Dervishagich said. Jean-Christophe Gayrand, representing the EU Delegation to Armenia, stated that freedom and pluralism of the media were key to the democratic development in Armenia.

Among the activities supported by the programme are the improvement of the implementation of media regulatory frameworks in line with CoE standards, better understanding among journalists of their rights and ethical rules, support for public service broadcasters to improve professionalism and better gain the trust of political leaders, civil society, media professionals and the general public.



Խթանելով եվրոպական լրատվական չափանիշները

ԵՄ-ն և Եվրոպայի Խորհուրդը (ԵՄ) հունիսի 17-ին մեկնարկ են տվել մի համատեղ ծրագրի, որը կոչվում է «Հարավային Կովկասում և Մոլդովայում լրատվամիջոցների ազատության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության խթանում»: Ծրագրի նպատակն է նպաստել խոսքի ազատության իրավական և ենթակառուցվածքային երաշխիքների զարգացմանը, բարձրորակ լրագրության և բազմակարծիք լրատվական դաշտի ստեղծմանը՝ եվրոպական չափանիշներին համահունչ: Այն համաֆինանսավորվում է ԵՄ-ի և ԵՄ-ի կողմից՝ 1 100 000 եվրո ընդհանուր բյուջեով:

Երևանում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ ԵՄ ներկայացուցիչ Լեյլա Դերվիշագիչը, ասել է, որ ծրագիրը մեկնարկել է այս տարվա հունվարին և կընթանա երկու տարի՝ ներառելով 20-ից ավելի միջոցառումներ: «ԵՄ-ն և ԵՄ-ն պատրաստ են հետազայուն և խորհրդատվական և այլ աջակցություն ցուցաբերելու Հայաստանին», - նշել է Դերվիշագիչը: Հայաստանում ԵՄ պատվիրակության կողմից ժամ-Քրիստոֆ Գայրանդը իր հերթին նշել է, որ լրատվամիջոցների ազատությունն ու բազմակարծությունը առանցքային մշակակություն ունեն Հայաստանում ժողովրդա-

վարության զարգացման համար: Ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունները են լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող օրենսդրության բարեփոխումը՝ եվրոպական ստանդարտներին համապատասխան, լրագրողներին իրենց իսկ իրավունքների ու էթիկայի կանոնների մասին իրազեկումը, աջակցությունը հանրային հեռարձակողներին պրոֆեսիոնալիզմի բարձրացման, ինչպես նաև քաղաքական առաջնորդների, քաղաքացիական հասարակության, ՁԼՄ-ների և հասարակայնության շրջանում ավելի մեծ վստահություն ձեռք բերելու նպատակով:



EU success/ԵՄ հաջողություններ

Smoother, safer and more reliable: Renewed transport cooperation



The European Commission on 7 July published a new Neighbourhood Transport Action Plan to strengthen links with neighbouring regions to the East and South of the EU. The plan proposes more than 20 concrete measures to make transport connections smoother, safer and more reliable. At the same time, it will deepen market integration to the advantage of both the EU and its neighbouring regions.

Transport cooperation with the EU's neighbouring regions has so far taken place under a number of bilateral and regional initiatives. This new action plan builds on the results achieved so far, strengthens in particular connections to the east and brings together regional transport cooperation into a single policy.

Key measures for connecting the transport systems of the EU and its neighbours include:

- Extending the EU's internal aviation market and Single European Sky to neighbouring regions;
- Joining up the Trans-European Transport Network with infrastructure of the EU's

neighbours through priority transport projects;

- Making better use of rail freight potential by opening markets and by alleviating technical barriers such as differences in rail gauge sizes;
- Streamlining the implementation of regional transport cooperation, by establishing an Eastern Partnership Transport Panel to oversee cooperation with neighbours to the east;
- Making sea transport with neighbouring countries more efficient, including in the longer term, through their inclusion in the "Blue Belt" of free maritime movement in and around Europe;
- Helping neighbouring countries to improve road safety.

Improving transport connections and promoting a safe, secure and environmentally friendly transport system can help EU neighbours to become economically stronger and politically more stable.

Actions up to 2013 will be financed with existing resources through better prioritisation of projects and measures.

Ավելի սահուն, անվտանգ և հուսալի. տրանսպորտային նոր համագործակցություն

Յուլիսի 7-ին Եվրոպական հանձնաժողովը հրապարակել է Հարևանության տրանսպորտային նոր գործողությունների ծրագիրը՝ նպատակ ունենալով բարելավելու տրանսպորտային հաղորդակցությունը ԵՄ հարևան հարավային ու արևելյան տարածաշրջանների հետ: Ծրագրում առաջադրված են ավելի քան 20 կոնկրետ միջոցառումներ՝ տրանսպորտային կապերն ավելի սահուն, անվտանգ և հուսալի դարձնելու համար: Միաժամանակ, այս ծրագրի շնորհիվ կխորացվի շուկայական ինտեգրումը՝ հօգուտ ԵՄ-ի և հարևան տարածաշրջանների:

Տրանսպորտի ոլորտում ԵՄ-ի համագործակցությունը հարևան տարածաշրջանների հետ մինչ օրս ընթանում էր երկկողմանի և տարածաշրջանային փոխադարձ նախաձեռնությունների մակարդակով: Գործողությունների այս նոր ծրագիրը հիմնվում է արդեն իսկ ձեռք բերված արդյունքների վրա, մասնավորապես՝ ամրապնդվելու են տրանսպորտային կապերը արևելքի երկրների հետ և տարածաշրջանում մշակվելու է տրանսպորտային համագործակցության միասնական քաղաքականություն:

ԵՄ-ի և հարևան երկրների տրանսպորտային համակարգերի կապակցման հիմնական միջոցառումները ներառում են.

- ԵՄ-ի ավիացիայի ներքին շուկայի և «միասնական եվրոպական երկնքի» ընդլայնումը՝ ներառելով հարևան տարածաշրջանները,
- Անդրեվրոպական տրանսպորտային ցանցի միացումը ԵՄ-ի հարևան-

ների ենթակառուցվածքին տրանսպորտային առաջնահերթ ծրագրերի միջոցով.

- Երկաթուղային բեռնափոխադրումների ներուժի օգտագործման բարելավումը՝ շուկաները բացելու և տեխնիկական խոչընդոտները, օրինակ՝ երկաթուղային ռելսերի միջև հեռավորության տարբերությունները նվազեցնելու միջոցով,
- Տարածաշրջանային տրանսպորտային համագործակցության իրականացման կատարելագործումը՝ Արևելյան գործընկերության տրանսպորտային հանձնախումբ ստեղծելու միջոցով, որը վերահսկելու է համագործակցության ընթացքն արևելյան հարևանների հետ,
- Հարևան պետությունների հետ ծովային տրանսպորտի արդյունավետության մակարդակի բարձրացումը,

այդ թվում՝ երկաթաձուլու հատվածում նրանց ներառելով Եվրոպայում և Եվրոպայի շրջակայքում ծովային տեղաշարժի «Կապույտ գոտու» («Blue Belt») մեջ,

• ճանապարհների անվտանգության բարելավման գործում օժանդակությունը հարևան պետություններին:

Բարելավվելով տրանսպորտային հաղորդակցությունն ու խթանելով ապահով, հուսալի ու էկոլոգիապես անվտանգ տրանսպորտային համակարգերի զարգացումը՝ ԵՄ-ն կարող է օգնել իր հարևանների՝ դառնալու տնտեսապես ուժեղ ու քաղաքականապես ամուր: Մինչև 2013 թվականը իրագործվելիք այս միջոցառումները ֆինանսավորվելու են առկա միջոցների հաշվին՝ ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունները սահմանելու միջոցով:





Եվրոպական օմբուդսմեն (մարդու իրավունքների պաշտպան)

Եվրոպական օմբուդսմենը քննում է ԵՄ հաստատությունների, մարմինների, գրասենյակների և գործակալությունների դեմ ներկայացվող բողոքները:

Օմբուդսմենն արձագանքում է ԵՄ քաղաքացիների, տնտեսվարողների և կազմակերպությունների բողոքներին՝ օգնելով բացահայտել անբարեխիղճ կառավարման այն դեպքերը, երբ ԵՄ հաստատությունները, մարմինները, գրասենյակները և գործակալությունները խախտել են օրենքը, չեն հարգել որակյալ և օրինական կառավարման ու վարչարարության սկզբունքները կամ խախտել են մարդու իրավունքները: Այդօրինակ դեպքերի թվին են պատկանում՝ անարդարության, խտրականության դրսևորումը, իշխանության չարաշահումը, տեղեկատվության բացակայությունը կամ այն չտրամադրելը, անհարկի ձգձգումները, թյուր ընթացակարգերը:

Օմբուդսմենը, սակայն, չի կարող հետաքննել՝

- ✓ ԵՄ անդամ պետությունների ազգային (համապետական), տարածքային (տարածաշրջանային) կամ տեղական (ինքնա)կառավարման մարմինների (նախարարություններ, նահանգային/շրջանային գործակալություններ և տեղական խորհուրդներ) դեմ բողոքները, նույնիսկ, եթե այդ բողոքները ԵՄ խնդիրներին են վերաբերում,
- ✓ ազգային դատարանների կամ օմբուդսմենների գործունեությունը: Եվրոպական օմբուդսմենը վերջիններիս ընդունած որոշումները զանգատարկելու համար նախատեսված մարմին չէ,
- ✓ մասնավոր ընկերությունների կամ ֆիզիկական անձանց դեմ բողոքները:

Օմբուդսմենն ընտրվում է Եվրոպական խորհրդարանի կողմից հինգ տարի ժամկետով՝ վերընտրվելու հնարավորությամբ, ինչը համապատասխանում է խորհրդարանի գումարման ժամկետներին:

Օմբուդսմենի գրասենյակը քննություն է սկսում բողոք ստանալուց հետո կամ սեփական նախաձեռնությամբ: Այն լիովին անկախ է և չի ենթարկվում որևէ կառավարության կամ կազմակերպության ցուցումներին:

տեղ են օրենքը, չեն հարգել որակյալ և օրինական կառավարման ու վարչարարության սկզբունքները կամ խախտել են մարդու իրավունքները: Այդօրինակ դեպքերի թվին են պատկանում՝ անարդարության, խտրականության դրսևորումը, իշխանության չարաշահումը, տեղեկատվության բացակայությունը կամ այն չտրամադրելը, անհարկի ձգձգումները, թյուր ընթացակարգերը:

Օմբուդսմենը, սակայն, չի կարող հետաքննել՝

- ✓ ԵՄ անդամ պետությունների ազգային (համապետական), տարածքային (տարածաշրջանային) կամ տեղական (ինքնա)կառավարման մարմինների (նախարարություններ, նահանգային/շրջանային գործակալություններ և տեղական խորհուրդներ) դեմ բողոքները, նույնիսկ, եթե այդ բողոքները ԵՄ խնդիրներին են վերաբերում,
- ✓ ազգային դատարանների կամ օմբուդսմենների գործունեությունը: Եվրոպական օմբուդսմենը վերջիններիս ընդունած որոշումները զանգատարկելու համար նախատեսված մարմին չէ,
- ✓ մասնավոր ընկերությունների կամ ֆիզիկական անձանց դեմ բողոքները:

Օմբուդսմենն ընտրվում է Եվրոպական խորհրդարանի կողմից հինգ տարի ժամկետով՝ վերընտրվելու հնարավորությամբ, ինչը համապատասխանում է խորհրդարանի գումարման ժամկետներին:

Օմբուդսմենի գրասենյակը քննություն է սկսում բողոք ստանալուց հետո կամ սեփական նախաձեռնությամբ: Այն լիովին անկախ է և չի ենթարկվում որևէ կառավարության կամ կազմակերպության ցուցումներին:

Օմբուդսմենն ընտրվում է Եվրոպական խորհրդարանի կողմից հինգ տարի ժամկետով՝ վերընտրվելու հնարավորությամբ, ինչը համապատասխանում է խորհրդարանի գումարման ժամկետներին:

Օմբուդսմենի գրասենյակը քննություն է սկսում բողոք ստանալուց հետո կամ սեփական նախաձեռնությամբ: Այն լիովին անկախ է և չի ենթարկվում որևէ կառավարության կամ կազմակերպության ցուցումներին:



Մանուել Մալթա

Մալթայի մայրաքաղաք Վալետտայի՝ դեպի արևմուտք ձգվող նեղիկ փողոցներից մեկը տանում է դեպի Եվրոպայի ամենահին թատրոնը, որը հայտնի է Մանուել Մալթա անունով:



Այն կառուցվել է 1731 թվականին՝ ընդամենը տասն ամսվա ընթացքում: Թատրոնի կառուցման գումարն իր անձնական միջոցներից տրամադրել է Մալթայի ասպետների մեծ մագիստր, պորտուգալացի Անտոնիո Մանուել դե Վիլենան: Նա ցանկանում էր Սբ. Գովհաննեսի միաբանության երիտասարդ ասպետներին հետ պահել գայթակղություններից և նրանց, ինչպես նաև Մալթայի լայն հասարակության համար «ազնիվ ժամանց» ապահովել: Այդ նշանաբանն անգամ դառնալով է թատրոնի մուտքի վերևում և պահպանվում է մինչ օրս՝ «ad honestam populi oblectationem» (ժողովրդի արժանավայել ժամանցի համար):



Թատրոնն ունի 600 նստատեղ և բարոկկո ոճի փորագրություններով զարդարված օթյակներ: Իսկ դահլիճի ակունակային մասին խոսելիս հաճախ լսում ենք՝ «այն այնքան կատարյալ է, որ կարելի է լսել թե ինչպես է դիրիժորը թերթում նոտաները...»:

Երկրորդ համաշխարհային տարիներին թատրոնի շենքը զգալիորեն վնասվել էր: Տասնամյակ տևած վերականգնողական աշխատանքների արդյունքում թատրոնի շենքը վերագտել է իր երբեմնի շքեղությունը, վերականգնվել է նաև 22 կարատանոց ոսկեզօծ մեծ առաստաղը: Իսկ 1960 թվականին հեղինակավոր անգլիական «Ռամբլե» բալետային խմբի ելույթով վերսկսվել է թատրոնի գործունեությունը: Այդ օրվանից ի վեր, աշխարհահռչակ շատ արտիստներ մեծ պատիվ են համարում Մանուել թատրոնի հնամենի պատերի ներսում ելույթ ունենալը:

Չնայած իր պատկառելի տարիքին, Մանուել թատրոնն այսօր էլ ապրում ու զարգանում է. այն խրախուսում է թատերական արվեստի բոլոր բնագավառներում համոզես եկող մալթացի տաղանդավոր երիտասարդներին, ավելին՝ 2009 թվականից թատրոնում գործում է նաև մանկական թատերական ստուդիա:

Լրիվ անվանումը՝ Մալթայի Գանրապետություն:

Մայրաքաղաքը՝ Վալետտա:

Պետական կառուցվածքը՝ Պառլամենտական հանրապետություն:

Տարածքը՝ 316 քառ. կմ:

Բնակչությունը՝ 0.4 մլն:

Պետական լեզուն՝ մալթերեն, անգլերեն:

ԵՄ անդամակցությունը՝ 2004 թ.-ից:

Աֆրոդիտե օպերային փառատոն

Լեգենդի համաձայն՝ Կիպրոսի արևմտյան ջրերից Պաթոս քաղաք է դուրս եկել հին հունական դիցաբանության սիրո ու զեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեն...



Աստվածահաճո այդ տեղանքում էլ ամեն տարվա սեպտեմբերին անցկացվում է Պաթոսի Աֆրոդիտե օպերային փառատոնը (Pafos Aphrodite Festival): Փառատոնի ընթացքում հանդիսատեսը բացառիկ հնարավորություն է ունենում վայելելու տարբեր երկրներում բեմականացված դասական օպերաները:



Աֆրոդիտեի փառատոնը Կիպրոսում անցկացվում է 1998 թվականից: Փառատոնի կազմակերպման հիմնական նպատակներից էր Պաթոսը մշակութային միջազգային կենտրոն դարձնելը: Եվ դա, անխոս, կազմակերպիչներին հաջողվում է: Այսօր ամառի օպերաներն ունկնդրելու համար Պաթոս քաղաքի հին նավահանգստի մոտ գտնվող միջնադարյան դղյակի առջև մի քանի հազար հանդիսատես է հավաքվում. զեղեցիկ դեկորներ, շքեղ բեմականացում և կենդանի կատարում բաց երկնքի տակ... այս ամենը փառատոնի հյուրերին կատարյալ վայելք է պարզևում:

Լրիվ անվանումը՝ Կիպրոսի Գանրապետություն:

Մայրաքաղաքը՝ Նիկոսիա:

Պետական կառուցվածքը՝ Նախագահական հանրապետություն:

Տարածքը՝ 9 250 քառ. կմ:

Բնակչությունը՝ շուրջ 0.8 մլն մարդ:

Պետական լեզուն՝ հունարեն, թուրքերեն:

ԵՄ անդամակցությունը՝ 2004 թ.-ից:

ԲԱՌԱՐԱՆ

- **Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորում (ԲՅՖ) Eastern Partnership Civil Society Forum (CSF).** Նպատակն է խթանել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԲՅԿ) միջև կապը և դյուրացնել նրանց երկխոսությունը պետական մարմինների հետ՝ վերահսկելով նախարարների հանդիպումների և բազմակողմանի այլ բեմատիկ ուղղությունների աշխատանքը: Քաղաքացիական հասարակության ֆորումը խթանում է նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և Արևելյան գործընկեր երկրներում իշխանությունների միջև երկխոսությունը, շփումը և փորձի փոխանակումը (ներառյալ ԵՄ ինտեգրման հարցում): Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության կազմակերպություններից բացի՝ մասնակցում են նաև ԵՄ-ն, երրորդ երկրները, Եվրոպական հանձնաժողովը, Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեն և միջազգային կազմակերպությունների/ցանցերի ներկայացուցիչները:
- **Հարևանության ներդրումային գործիքը (ՀՆԳ) Neighbourhood Investment Facility (NIF)** ֆինանսավորում է ընդհանուր շահերից բխող ծրագրերը և հիմնականում շեշտը դնում է էներգետիկայի, շրջակա միջավայրի և տրանսպորտի հարցերի վրա: Այս գործիքի շրջանակներում ԵՅ-ն հատկացրել է 700 միլիոն եվրո 2007-2013 թվականների համար և խնդրել է անդամ-պետություններին աստիճանաբար համապատասխանեցնել այս ներդրումը, առավելագույնի հասցնել վարկային լծակները:
- **ՏՐԱՍԵԿԱ ծրագիրը (TRACECA Programme)** տեխնիկական աջակցության ծրագիր է, որն ուղղված է Սև ծովով, Հարավային Կովկասով, Կասպից ծովով և Կենտրոնական Ասիայի երկրներով Եվրոպայի և Ասիայի միջև միջանցքի զարգացմանը: Սեկնարկվելով 1993 թվականին՝ ՏՐԱՍԵԿԱ-ն ֆինանսավորել է 62 տեխնիկական աջակցություններ և 14 ներդրումային ծրագրեր: ՏՐԱՍԵԿԱ-ի նպատակն է աջակցել գործընկեր երկրների քաղաքական և տնտեսական անկախությանը՝ ուժեղացնելով Եվրոպական և համաշխարհային շուկաներ մտնելու նրանց կարողությունը՝ այլընտրանքային տրանսպորտային ուղիների միջոցով: Այն խթանում է գործընկեր երկրների միջև տարածաշրջանային համագործակցությունը և ծառայում որպես կատալիզատոր միջազգային ֆինանսական կազմակերպություններից (ՄՖԿ) և մասնավոր ներդրողներից աջակցություն ստանալու համար:

For more information please contact the Delegation of the European Union to Armenia
 21 Frik str, Yerevan, Armenia Entrance from Proshyan str.
 Tel.: (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95; E-mail: Delegation-Armenia@ec.europa.eu; http://ec.europa.eu/delegations/armenia; http://eunewsletter.am
 The Newsletter is prepared by SHARM Holding

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եվրոպական միության պատվիրակությանը Հայաստանում
 Հայաստան, Երևան, Ֆրիկի փողոց, 21, (մուտքը Պռոշյան փողոցից)
 Հեռ.՝ (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95, էլ. փոստ՝ Delegation-Armenia@ec.europa.eu, http://ec.europa.eu/delegations/armenia; http://eunewsletter.am
 Հաղորդագիրը պատրաստել է ՇԱՐՄ Հոլդինգը